

Ա Մ Ի Ր Տ Ո Վ Լ Ա Յ

Հին հայկական բժշկարանները տակավին մանրակրկիտ կերպով ուսումնասիրված չեն: Կան մի քանի հրատարակություններ, որոնց մեջ հատկապես աչքի է ընկնում հայտնի բժնասեր Բասմաջյանի հետազոտությունը: Վերջերս Արմֆանի հրատարակությամբ լույս է տեսել նաև Ամիրտովլաթի «Օգուտ բժշկութեան» գիրքը՝ Ստ. Մալխասյանի ընդարձակ նախաբանով:

Բանասերները, պետք է ասել, նյութին մոտեցել են ավելի հաճախ բժշկագիտական տեսակետից: Մինչև այժմ չի պարզված հին բժշկարանների կապակցությունը հայ կուլտուրայի հետ: Թերևս որոշ բացառություն է կազմում Մալխասյանի ուսումնասիրական ակնարկը: Սակայն Մալխասյանն էլ կանգ է առնում բացառապես Ամիրտովլաթի վրա և ոչ մի խոսք չի ասում 15-րդ դարի գիտական գրականության մասին: Թե ճշգրտապես է կապված ակնանավոր այդ գործիչը հայ հին կուլտուրայի և, առանձնապես, հարևան ժողովուրդների կուլտուրայի հետ, այժմ էլ պարզված չէ: Կարելի է միայն շատ ընդհանուր ենթադրություններ անել: Մի շարք կարևոր հարցերի Մալխասյանը պարզորոշ որևէ պատասխան չի տալիս, այնքինչ մեզ համար առաջին հերթին նշանակություն ունին բոլոր այն հարցերը, որոնք այս կամ այն չափով կարող են լուսաբանել 15-րդ դարի հայ կուլտուրայի որոշ երանգները: Միևմիային հերացին, կիլիկյան հին քաղաքների հայ բժիշկները, ավելի ուշ՝ Ամիրտովլաթը եղել են գիտության ու բույն ներկայացուցիչներ: Նրանք ժամանակին ունեցել են ոչ միայն հովանավորների, այլ նաև ընթերցողների կոնտինգենտ, կապված են եղել առաջավոր հասանքների հետ, արձագանքել են հին օրերի գիտության պրոգրեսներին:

Եթե Արևմտյան Եվրոպայում ալքիմիկոսներից և բժիշկներից շատերը հղել են վերածնական շարժման ներկայացուցիչներ, ապա միևնույնը, կասկածից դուրս է, պիտի լինել նաև հայաբնակ քաղաքներում: Հայտնի է, որ արևելյան երկրներում նույնպես մի քանի բժիշկներ հանդես են եկել որպես հումանիստ-իմաստասերներ: Բավական է միայն հիշել արաբական և իրանական բժիշկներին: Ավիցեննան ժամանակին հայտնի էր որպես ազատախոհ գիտուն բժիշկ, բաղմաթիվ գիտական ուսումնասիրությունների հեղինակ, կորովի գործիչ: Նրա հետազոտությունները թարգմանվել են լատիներեն և միջնադարյան ամբողջ Արևմուտքին հայտնի էին:

Ահա թե ինչու կարելի է ասել, որ հայ բժշկարանների հեղինակների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը կարող է պարզել ոչ

միայն հայ գիտությունն անցյալի պատկերը, այլ նաև հայ հին գիտությունների հարաբերություններն արևելյան և արևմտյան հումանիստների հետ:

Կիրիկյան հին քաղաքներում, ինչպես հայտնի է, եղել են իտալական գաղութներ: Արիշանը ասում է, որ իտալական և ֆրանսիական քաղաքներում էլ շատ հին օրերին եղել են վաճառականական հայկական գաղութներ: Հայ առաջին տպագրիչներից մի քանիսը հանգես են եկել հենց այդ վայրերում: Հայ տպագրության պատմության մեջ հիշվում է Լայոնիցի անունը: Հին տպագիր հրատարակությունների մեջ կան գրավյուրներ, որոնք վկայում են միևնույն հայ տպագրիչների կուլտուրայի մասին: Վերջերս Լիով քաղաքում կազմակերպված մի կոնֆերանսում ցուցադրվել է ականավոր Դյուրերի «Ապոկալիպսիս» վերարտադրությունը հայերեն մի հին գրքի մեջ: Բազմաթիվ այդպիսի փաստեր կան:

Ի՞նչ խոսք, որ առանձին հայ բժիշկներ էլ ծանոթ են եղել անվանի եվրոպական բժիշկների հետ և այս կամ այն չափով արձագանքել են գիտության պրոբլեմներին:

Ողջունելով Արմֆանի ձեռներեցությունը, կարելի է միայն մի ցանկություն հայտնել: Հետադարձում բոլոր նման հրատարակություններին անհրաժեշտ է կցել ավելի մանրամասն քննական հոդվածներ և գիտական էսսեներ: Մեզ մոտ ներկայումս կան հայտնի բժշկագետներ և պատմաբաններ, հետևաբար հնարավոր է այժմ չսահմանափակվել լուրի ձեռագրի հրատարակությամբ: Ժամանակ է մոտենալ ընդհուպ նաև հին աղբյուրների մանրակրկիտ գիտական լուսաբանության գործին: Այդ անհրաժեշտ է: Թե որքան կարևոր նշանակություն ունի այդօրինակ քննությունը, ցույց է տալիս հենց Մալխասյանի պատմական-քննական ակնարկը: Ես ցանց չեմ առնի անվանի հայագետի կոմպետենս գիտությունների վրա: Իմ այս մատենագրական ռեցենզիայի մեջ ես կուղենայի միայն շեշտել, որ Ամիրտովլաթի նոր ձեռագրի հրատարակությունը, ինչպես նաև Մալխասյանի նախարանը հիշեցնում են նորից հին ձեռագիր աղբյուրների պատմագիտական վերլուծության անհրաժեշտության մասին:

1

Թե ե՞րբ է ծնվել Ամիրտովլաթը, այդ մասին հաստատուն և ստույգ տեղեկություններ չկան: Հայտնի են միայն այն տվյալները, որոնք ցրված են ձեռագիր գրքերի հիշատակարաններում:

Իբրեկու ուսումնասիրությունները Ամիրտովլաթը գրել է 1484 թվին: Այդ երկու գրքերն էլ բժշկագիտական ձեռնարկներ են (Ախրապատին, Ուսումնի բժշկութեան): Մալխասյանը ենթադրում է, որ Ամիրտովլաթը ծնվել է մոտավորապես 1414—1419 թ.: Ապա լավ հայտնի է, որ իր մի գրքի հիշատակարանում ինքը՝ Ամիրտովլաթը ոտանավորով պատմում է իր մասին: Այդտեղ նա հայտնում է, որ դիրքը ավարտելու համար աշխատել է չորս տարի, բազմաթիվ գրքեր է ժամանակին ուսումնասիրել, կարգացել է ոչ միայն հայ հին գրքերը, այլ նաև հունարեն, արաբերեն, պարս-

կերեն, լատիններեն ուսումնասիրություններ (ավարտեմ զսա եինգ լեզվով զինչ որ ուսա.) և ապա ամբողջ գիրքն ավարտել է 1484 թվին:

Արդեն այդ տեղեկություններից երևում է, որ նա եղել է ոչ սովորական արևելյան «հաքիմ», այլ իր էպոխայի դիտության լիովին իրազեկ մի անձնավորություն: Առաջին իր ուսումնասիրությունների մասին նա ասում է շատ սլարզ, որ դա «թագավորական բժշկարան» է (ավարտված 1454-ին): Պարիզի մատենադարանի ձեռագրում ասված է, որ Ամիրտովլաթը եղել է «գլխավոր խիրուրգ» և «անձնապահապետ»: Բասմաջյանի ենթադրությամբ՝ Ամիրտովլաթը հայտնի սուլթան Մեհեմեդ Երկրորդի անձնական բժիշկներից մեկն է եղել: Մալխասյանը, հենվելով Բասմաջյանի ուսումնասիրության մեջ բերված ակնարկների վրա, գտնում է, որ Ամիրտովլաթը, հավանական է, ծնվել է Ամասիայում, շատ ճանապարհորդել է, եղել է Պարսկաստանում, Շիրազ, Խորասան հայաբնակ քաղաքներում և ապա արդեն քառասուն տարեկան հասկում հաստատվել Պոլսում: Այդտեղ էլ նա դառնում է ականավոր գործիչ: Սակայն ինչ-որ հանգամանքներ թելադրում են նրան փախչել թե հեռանալ Պոլսից: Նորից նա Պոլիս է վերադառնում 70-ական թվականներին: Ահա այդ ժամանակ էլ նա վերամշակում է իր գրքերը և ապա քիչ հետո անցնում Բրուսսա, ուր և մեռնում է:

Թուռցիկ այդ տվյալներն էլ ցույց են տալիս, որ Ամիրտովլաթը ժամանակին եղել է շատ խոշոր գործիչ, ակտիվ կերպով մասնակցել է հասարակական գործունեությանը, հալածվել է, հայտնի է եղել լայն շրջաններին: Հատուկ մի ծանոթագրության մեջ Մալխասյանը քաղվածաբար բերում է մի հատված բժիշկ Լ. Հովհաննիսյանի ձեռագիր մի ուսումնասիրությունից: Այդտեղ Հովհաննիսյանը ուշագրավ կարծիք է հայտնում այն մասին, որ Ամիրտովլաթը «ինչ որ զաղափարական պալքար էր մղում գոյություն ունեցող զանազան անարդարությունների դեմ, տուժում էր հանուն այդ պալքաբի... սակավաթիվ բողոքողների շարքումն էր և իր կյանքի անձնական հարմարությունների և օգտի մասին չէր մտածում...»:

Այդ կարծիքն այնքան էլ վիճելի և անհիմն չի, քանի որ հենց Ամիրտովլաթի հիշատակարանումն էլ կան բավական որոշ և նշանակալից ակնարկներ աստանդական շատ ծանր կյանքի մասին: ...«Շատ զժարութիւն, — պատմում է ինքը՝ Ամիրտովլաթը, և պատահումք եմ քաշել ի յանօրինաց, ի յայլազգացն, ի դատաւորաց, ի թագաւորաց և ի շխանաց. և շատ գրեանք էի ժողովել ի Հարապոց և ի Պարսից և ի Թուրքաց. և շատ դարիպութիւն էի քաշել. և զժամանակիս գշարն ու բարին և զպատահումսն էի կրել զհարստութիւն և զաղքատութիւն էի քաշել. և ի յերկրէ ի յերկիր շատ բժշկութեան զարեւստն էի գործել, և փորձել էի ես իմ միտքն շատ զեղեր և թարքիպնի, և շատ ծառայել էի հիւանդաց, և մեծամեծացն և իշխանաց, և հաղարապետաց, և հարիւրապետաց, և քաղաքացոց, և ազքատաց, մեծի և փոքու, և շատ չար ու բարի էի տեսել, և հանց եղայ ես հիմայ, որ ոչ հարստութեան կու խնդամ, և ոչ էլ աղքատութեան կու տրտմիմ, և

զամէն չարն ու զբարին մէկ կու տեսնում, և անհոգել եմ այս ամեն ցանկութենէն կենցաղու...»¹

Կարծես Ալիցեննայի կյանքի դրվագներն են նկարագրվում մի ակնթարթ—այնքան յուրահատուկ կոլորիտ կա այդ ինքնակենսագրության մեջ: Կա նաև ինչ-որ ամուր շեշտ—շատ կորովի և անկեղծ տոն—«հինգ լեզուներով» գրյանք ժողովող, իշխաններին, հարուստներին, դատավորներին և աղքատներին բուժող այդ «հաքիմի» տխուր խոսքերի մեջ:

Արևելյան հայտնի բանաստեղծների և մեծ հումանիստ-գրողների նման մի գործիչ է եղել Ամիրտովլաթը—սուլթանական պալատից դեպի աղքատների նկուղներն իջնող, տառապանք ու ցավ, կյանքի ներհակությունները դիտող այդ գիտուն-բժիշկը: Կասկածից դուրս է, որ աստանդական իր կյանքի օրերին նա ունեցել է ծանոթներ և զինակիցներ՝ հայրենակիցների շրջանում: Արևելյան քաղաքներում նա ավելի հաճախ գուցե հենց դրանց հետ է շփվել և այդ քաղաքների արհեստավոր բնակչության համար էլ գրել է իր գրքերը՝ այնքան տիպիքական—աշխարհաբար լեզվով:

Ինքնակենսագրությունից համենայն դեպս պարզ է, որ մի որոշ շրջանում Ամիրտովլաթը Պոլսում ունեցել է բարձր պաշտոն, հետագայում միայն ստիպված է եղել թողնել այդ պաշտոնը և անդամ փախչել Մակեդոնիա: Նորից մենք տեսնում ենք նրան միևնույն Պոլսում շատ ուշ: Մալխասյանի ենթադրությամբ՝ նա Պոլիս է փոխադրվել 70-ական թվականներին, թեև ավելի հավանական է հենց այն տարեթիվը, որ ինքը՝ Ամիրտովլաթն է հիշատակում իր ոտանավորի մեջ: Եթե մենք նկատի առնենք այն, որ այդտեղ նա շատ կտրուկ կերպով շեշտում է, թե երբ է ինքը փոխադրվել Պոլիս (և հիմա եմ բնակել ի Բուզանդիա.), մենք կարող ենք գուցե մի որոշ չափով հասկանալ այնքան անակնկալ փախուստի իրական դրդապատճառները: Անհրաժեշտ է միայն թուուցիկ կերպով կանգ առնել անցյալի Թյուրքիայի պատմության մի երկու էջերի վրա:

Թյուրքիայում, 1451 թ. մինչև 1481 թ. իշխել է հայտնի սուլթան Մեհմեմեդ Երկրորդը—օսմանյան պետականության ամենախոշոր կազմակերպողը, որը միաժամանակ համարվում է արվեստի և գրականության մեղեդատ: Այդ սուլթանը եղել է տաղանդավոր գործիչ, կանոնավորել է տաճկական օրենսդրությունը, հովանավորել է գրողներին և պոետներին, ինքն էլ զբաղվել է գրականությամբ: Ժամանակակիցներին նա հայտնի էր հատկապես որպես իրանական պոետների երկրպագու: Սեփական ձեռներեցությամբ Մեհմեմեդ Երկրորդը հեռու Հերաթում ապրող իրանական կլասիկ պոետին՝ ականավոր Ջամիլի ուղարկում է թոշակ:

Երբ 1453 թ. Մեհմեմեդ Երկրորդը մտնում է Պոլիս, հիշում է իրանական բանաստեղծի խոսքերը՝

«...Սարըը պալատում ամպհովանի է հյուսում... միակ պահապանն է կայսերական ամպհովանում...»

¹ Տե՛ս՝ Ա մ ի ր տ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ց ի — Օգոստ բժշկութեան, էջ 7. Արմ. Գևորգյան, 1940 թ., Երևան:

Բուն է նվժում Աֆրասիաբի պալատների գմբեթի տակ. միակ երաժիշտն է, որ պատիվ է տալիս թագավորին...»

Կռիմսկին հիշատակում է, որ Մեհեմեդ Երկրորդը, բացի տաճկերենից՝ լավ ծանոթ էր հունարենին, լատիներենին, սերբերենին. արևելյան լեզուներին էլ (արաբերեն, պարսկերեն) տիրապետում էր լիովին: Սուլթանի պատվին 15-րդ դարում բազմաթիվ ներբողներ են դրում հույն և լատին պոետները Իտալական Վերածնության հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Ֆրանչեսկո Գիլելֆոն (1398—1481), երբ իմանում է Պոլսում ստրկացրած իր ազգականունների մասին, հունարեն մի նամակ է գրում սուլթանին և ներբողական բանաստեղծության հետ միասին ուղարկում նրան: Սուլթանը կատարում է բանաստեղծի խնդրը: Վենետիկյան Խորհրդի կարգադրությամբ 1479 թ. Պոլիս է մեկնում հայտնի նկարիչ Ջեմտիլե Բելլինի, որին սուլթանը հովանավորում է արևելյան մեցենասների նման: Բայց այդ մեցենատը արևելյան դեսպոտ էր—վայրենի բնազդներով համակված գործիչ, որ մասսայական կոտորածներ էր կազմակերպում նոր վայրեր գրավելու ժամանակ: Հաճախ սուլթանը հրամայում էր քերթել կենդանի մարդկանց մորթին, կտրատել նրանց, որոնք միամտաբար հավատ ընծայելով սուլթանի ազնիվ խոսքին, անձնատուր էին լինում: Պատմում են, որ դիտելով Ջեմտիլե Բելլինիի մի նկարը, սուլթանը, որպես մարդասպանության հմուտ մասնագետ, նկատում է, որ նկարիչը ճշգրիտ կերպով չի նկարագրել գլխատված մարդու վիզը: Այա, իր խոսքերի ճշտություներ հաստատելու համար, նա հրավիրում է ստրուկներից մեկին և հենց այդտեղ էլ, նկարչի մոտ կտրել է տալիս ստրուկի գլուխը: Անատոմիական այդ «կոնսուլտացիան» ցույց է տալիս, որ սուլթանի մոտիկ մարդիկն էլ ենթակա էին բազմաթիվ վտանգների: Գիտության և գրականության ներկայացուցիչներին հովանավորող, նկարների, արձանների, մեդալիների կոլեկցիաներ կազմող այդ սուլթանը միաժամանակ դաժան կերպով նետվում էր անգամ ամենամոտիկ մարդկանց վրա:

Մեհեմեդի ժառանգը՝ Բայազեդ սուրբը (1481—1512), միևնույն կռիմսկու կարծիքով, եղել է «կրթված դերվիշ», «ինտելիգենտ-դրոգ-սուֆի»: Թշնամիների նկատմամբ դա էլ խիստ անողոք էր: Սակայն միաժամանակ նա համարվում էր «մեղմ ու կուլտուրական բնավորության տեր անձնավորություն»: Ահա հենց այդ սուլթանի ժամանակ էլ, ըստ երևույթին, Ամիրտովլաթը հնարավորություն է ստանում անցնել ավելի անդորր սրտով խաղաղ կուլտուրական աշխատանքի, գրում է նորից իր ավելի ընդարձակ բժշկարանը, գուցե և ուրիշ աշխատասիրություններ, որոնք տակավին հայտնաբերված չլինելով՝ անհայտ են մնացել:

Եթե մենք այժմ հաշվի առնենք այն, որ հին օրերին կայսերական բժիշկների կացությունը Հափազնց «Փափուկ» էր անգամ գրականությունը հովանավորող դեսպոտների պալատներում, մեղ համար միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչո՞ւ Ամիրտովլաթը՝ «թագավորական բժշկարան» կազմող անվանի բժիշկը՝ այնքան անակնկալ կերպով պիտի թողներ պալատը և փախչեր Մակեդոնիա: Ել չենք խոսում այն մասին, որ Ամիրտով-

լաթի նման անձնավորության համար այնքան էլ հմայիչ տեսարաններ չէին մորթեղերձ, խեղդամահ, կտրատված մարդկանց մռայլ սիրուհուները:

Միևնույն Գիլելֆոն իր կյանքի վերջին շրջանում անիծում ու դատապարտում է «մեցենատ-սուլթանի» դաժան վայրենությունները: Պոլսում ապրող բազմաթիվ գրողներ և գիտուններ բազմաթիվ աոթներ են ունեցել համոզվելու, որ ազատախոհ և անկախ մտածողի համար ավելի ապահով է ապրել սուլթանական ռեզիդենցիայի սահմաններից հեռու...

2

Բացի բժշկարաններից՝ Ամիրտովլաթը գրել է նաև աստղաբաշխական կամ աստրոլոգիական մի գրվածք, որ թարգմանություն է արաբերենից: Գրքի վերնագիրն է «Գիրք ռամկական»: Կոմպիլյատիվ կամ թարգմտական այդ գիրքը Ամիրտովլաթը կազմել է Պոլսում, 1474 թվին: Կասկածից դուրս է, որ նրա շայեցողության բնութագրման համար այդ գիրքն էլ ներկայացնում է ուրույն արժեք: Համենայն դեպս լավ հայտնի է, որ նա էլ արաբական բազմաթիվ բժիշկների նման տարվել է աստրոլոգիայով և մեծագույն եռանդով ուսումնասիրել է երկնային մարմինների շարժումները: Ամիրտովլաթն էլ համոզված էր, որ առանձին մոլորակները խոշոր աղբյուրներ են թողնում մարդկանց զգայարանների վրա, պայմանավորում են անգամ մարդու կյանքի և ապագայի ամբողջ ուղին: Մոլորակներն ուսումնասիրվում էին գործնական-բժշկագիտական նպատակներով: Հին հայկական էփիմերտիկների մեջ կարելի է տեսնել աստրոլոգիական բժշկության արձագանքները:

Ամիրտովլաթի մոտ շատ հաճախ կրկնվում է աստուծո անունը: Իր էպոխայի բազմաթիվ ուրիշ գիտունների նման նա էլ կանգնած էր իշխող կրոնական մտայնության հիմնական գիրքերի վրա: Նրա բժշկարանների մեջ կրկնվող խորհուրդներն էլ, ռեցեպտներն էլ շատ հաճախ սկսվում են աստուծո անվան հիշատակությամբ: Մալխասյանը հիշեցնում է, որ աստուծո մասին են խոսել արաբ բժիշկները հատկապես հիվանդներին խրախուսելու նպատակով: Արաբական բժշկագիտական հին գրքերի «խնշալլահն» էլ, — ասում է նա, — բառացի կերպով Ամիրտովլաթը թարգմանել է: Եթե այդպես էլ չլիներ, դարձյալ զարմանալու կարիք չկա:

Ալեքսիական հին ձեռագիրների մեջ էլ տեսնում ենք միևնույնը: Բացարձակ կերպով հանդես գալ կրոնի դեմ հին օրերին չէին վստահանում անգամ ամենախիզախ և ըմբոստ հերետիկոսները: Հայտնի է, որ դրանք էլ «աստուծո» անունով էին կռվի ելնում կրոնի և եկեղեցու, աշխարհական և կրոնական ֆեոդալների ռոնապետության դեմ: Կրոնը շղարշ ու զգեստ էր: Եթե մենք դառնանք Ամիրտովլաթի գրքերին, կտեսնենք, որ նա հիշավի եղել է խոշոր դեմք, ինքնուրույն մտածողության տեր, հասարակական ջիղ ունեցող անձնավորություն:

Իհարկե նրա բժշկական ռեցեպտներն այժմ շատ հնացած են: Հնացած են նաև նրա գիտելիքները մարդակազմության, անատոմիայի և ֆիզիոլո-

գիտյի մասին: Բայց այն էլ ուշագրավ է, որ նա միշտ կոչ է անում բժշկին ամենից առաջ լավ ուսումնասիրել մարդու կազմվածքը, հաշվի տոնել շրջապատի պայմանների ազդեցությունը, կլիմայի նշանակությունը: Իր ժամանակի գիտության հատուկ զենքերով նա ջանացել է ուսումնասիրել մարդկային օրգանիզմի ֆունկցիաները և մշակել բուժման բացիոնալ մեթոդներ: Բազմաթիվ զրույթներ կան նրա գրքերի մեջ, որոնք շատ խորությամբ ու հին են ներկայումս: Միամիտ ու պրիմիտիվ են ժամանակակից բժշկագիտության տեսակետից նրա մեկնություններն ու ռեցիպտները: Բայց մենք այդ գործին էլ պիտի մոտենանք պատմական տեսակետից, հաշվի առնենք, թե երբ է նա ապրել և որքան հետաքննող միջոցներով է աշխատել: Ահա, եթե այդպես մոտենանք, կտեսնենք, որ իր ժամանակի համար նա եղել է առաջավոր դեմք, հենվել է հին օրերի բժշկագիտական ուսմունքների վրա, բարեխիղճ կերպով ուսումնասիրել է բազմաթիվ գրքեր, անգամ ինքն էլ լրացրել է, իր սեփական փորձերի հիման վրա, հայտնի բժշկագետներին: Իհարկե ավելի հաճախ նա հանդես է գալիս որպես պոպուլյարիզատոր: Նա ինքն էլ ընդգծում է, որ իր գրքերը թարգմանություններ են: Սակայն Մալխասյանը ճիշտ է նկատում, որ իրականում Ամիրտովլաթը անգամ թարգմանական գրքերի մեջ հանդես է գալիս որպես ինքնուրույն հեղինակ: Նա հաճախ քննադատաբար է վերաբերվում աղբյուրներին, թվարկում է միայն այն հեղինակներին, որոնց հետ ինքն էլ համաձայն է, կանգ է առնում մեկ կամ մի քանի բժշկագետների կարծիքների վրա, որոշ ընտրություն է անում:

Ամիրտովլաթի գրքերի մեջ հիշվում են բազմաթիվ հայտնի գիտուններ, որոնց մասին նա խոսում է շատ հաստատուն տոնով: Պարզ երևում է, որ զրանց նա կարդացել և ուսումնասիրել է: Հիշում է նա հատկապես Հիպոկրատի, Ռուֆուսի, Դիոգինես Ապոլոնացու, անտիկ աշխարհի ուրիշ գիտունների անունները: Շատ հավանական է, որ զրանցից մի քանիսի երկերը նա կարդացել է արաբերեն թարգմանությամբ, քանի որ արաբական թարգմանություններն ավելի հեշտ էր ձեռք բերել արևելյան քաղաքներում: Բայց նա գիտեր նաև հունարեն ու լատիներեն: Լատիներեն գրքերի մասին Ամիրտովլաթը ինքն է ակնարկում իր ինքնակենսագրական հուշերի մեջ: Ինչ վերաբերում է արևելյան, հատկապես արաբական և իրանական գիտական գրականությանը, ըստ երևույթին Ամիրտովլաթին լավ հայտնի էին գրեթե բոլոր ականավոր հեղինակների երկերը: Դա շատ խոշոր գրականություն էր: Միայն մատենագրական այն տեսությունները, որ իրենց ուսումնասիրությունների մեջ բերում են Կոլմսկին, Սալմազուրովը, Ամիրտովը, Բարտոլդը, ցույց են տալիս, թե որքան բազմազան նյութեր են արծարծել արևելյան գիտունները: Դրանցից շատերը եղել են խոշոր մտածողներ և մեծ էրուդիցիայի տեր մարդիկ: Հայտնի Ավիցեննան, Աբու Բեքր Մուհամմեդ Իբն Զախարիա էր Ռազին, շատ և շատ ուրիշ արևելյան բժշկագետներ հայտնի էին Ամիրտովլաթին: Իհարկե նա լավ ծանոթ էր ոչ միայն զրանց գործնական ձեռնարկներին, այլ նաև ամբողջ իմաստասիրությանը:

Նշանակալից են Ամիրտովլաթի կողմից արձարժված հիմնական սկզբ-

բունքները: Նա մի քանի անգամ ընդգծում է, որ բժիշկը պիտի լինի չափազանց հմուտ, իսկական վարպետ, շատ կարգացած: Նա համակված է օպտիմիզմով, մեծ նշանակություն է տալիս բժշկագիտությանը, միանգամայն համոզված է, որ գիտությունը զորավոր զենք է մարդկային տառապանքների դեմ: Նա ներշնչում է իր ընթերցողներին կառչել գիտությանը և գիտության միջոցով պայքարել հիվանդությունների դեմ:

...«Ամեն մահացու դոզոց,—ասում է նա,—դեղ մնալ կայ որ փառաւ. գդեղն մահացու...» Բայց այդ «մահացու գեղը» հաջողությամբ «փառատելու» համար բժիշկը պիտի անպատեհա լինի բարձր ուսման տեք, մոտենա հիվանդին մեծագույն ուշադրությամբ, իրական օգնություն հասցնի նրան: Բժիշկը պիտի լինի վեհանձն, բարեսիրտ, իմաստուն:

...«Հիվանդությունը,—նկատում է մի այլ տեղ Ամիրտովլաթը,—քննամի է, որ ավերում է քաղաքներն ու գյուղերը: Այդ քննամու դեմ մղվում է անդադադ քաղաքի գիտության զենքերով: ...Կոչվում ժամն հափիմ որպես պեխտար է...» Ահա այդ անողոր պատերազմի ժամանակ բժիշկը պիտի լուրջ հետևի, որպեսզի թշնամու դեմ մղված պայքարն էլ դառնա արդյունավետ: «Պատեհ է որ զամեն իրք հատենն տա», այդ «սլեստար» բժիշկը: Իսկ այդպես կարող է անել միմիայն դարձյալ իմաստուն և բարեխիղճ վարպետը:

Նաև բարձր դնահատելով ամենից առաջ գիտությունը, նա հիշեցնում է, որ կարգալ էլ աներաժեշտ է որոշ ընտրությամբ, առաջին հերթին աներաժեշտ է կարգալ վարպետներին, հասկանալ կարգացածը և միաժամանակ չմոռանալ:

Հսկայական աշխատանք թափելով ծանրագույն պայմաններում, նա կազմում է իր հայրենակիցների համար մի քանի գրքեր և միշտ հիշեցնում բժշկի բարձր միասիրտի մասին: Այդ յուրահատուկ բարոյական ավանդներին և մտերիմ խորհուրդներին մեջ գծվում է ինքը՝ Ամիրտովլաթն էլ, որպես էպոխայի առաջավոր իդեալիստ-գործիչ, բարձր բարոյական սկզբունքներով տոգորված, մարդկայնության իդեալների ջահակիր:

...«Հափիմն այլ,—ասում է նա,—կու պիտի որ ուսումն և իմաստութիւն ունենայ և նարտար լինենայ ի յիր արուեստն, և դուլ և վատուժ և նենգաւոր և ոխասիրտ չի լինայ. շատ գրեանք լինի տեսնել և ի վարպետէ կարգացել, և իր մաացն շատ ստածուն լինի փորձել, և բարեմիտ և խրատատու լինայ. և կծնի և գողի և զանձասէր և տահամի չի լինի, և աղքատաց իրք չի քննէ...»¹:

Որքան էլ հնացած չեն Ամիրտովլաթի տեսական հայացքները բժշկագիտության և ապա գործնական առաջարկները բուժման մեթոդների մասին, այնուամենայնիվ նրա քարոզած հիմնական ավանդները կարող են ուսանելի լինել այժմյան օրերի համար էլ, քանի որ ընդգծում են հատկապես վարպետության անհրաժեշտության մասին: Իր «Օգուտ բժշկութեան» գրքի ներածական մասում նա կանգ է առնում մարդակազմության վրա, հաղորդում է հրահանգներ առողջությունը պահպանելու մասին, կրկնում է

¹ Տես՝ Ամիրտովլաթ Ամասիացի—Օգուտ բժշկութեան, էջ 18. Արմֆանի հրատ., 1940 թ., Երևան:

իր էպիսոպոսի գիտուններին հատուկ սխալ կարծիքներն էլ: Բայց և այնպես նա, ինչպես վկայում են Բասմաջյանը, Հովհաննիսյանը, Մալխասյանը, մոտենում է բժշկագիտությունը մեծագույն բարեխղճությամբ, միշտ հենվելով իր ժամանակի առաջավոր բժշկագետների ուսումնասիրությունների վրա: Այդ աղբյուրներից արդեն—հայտնի էին Ամիրտովաթին հյուսթարոսությունը, կենդանիների ձվանների գեղձերի ազդեցությունը, նախապահպանական միջոցները, արևաբուժությունը, նուա՛ն ծառի արմատի կեղևի գործածությունը երիզորդի դեմ և այլն (Մալխասյանի Առաջաբան, էջ Ի Ա.):

Իր առաջին աշխատանքը Ամիրտովաթը գրել է 1459 թվին, հետագայում՝ 1466—1481 թվականներին գրում է «Օգուտ բժշկութեան», «Ախրապատին» և «Անդիտաց անպէտը»: Ամենից կարևոր ուսումնասիրությունը «Անգիտաց անպէտն» է, ավարտված 1478 թվին, ըստ Մալխասյանի՝ Ամիրտովաթի գլուխ-գործոցը: Այդտեղ էլ Ամիրտովաթը հիշեցնում է իր սկզբունքների մասին՝

Եղիւր հետևող իմաստութեան հետ.
Եթէ չուսանիս՝ բժիշկ ես անգէտ:
Լինիս դու իմաստուն՝ արա բանիս պէտ:
Գրոցս անունն է անգէտի անպէտ¹:

Իր բոլոր գրքերն էլ Ամիրտովաթը գրել է ըստ երևույթին ուսանողների համար: Ամենից բնորոշն այն է, որ բոլոր գրքերն էլ գրված են հայերեն և ժամանակակիցների համար հասկանալի լեզվով: Կարելի է ուրեմն ենթադրել, որ արևելյան քաղաքներում 15-րդ դարում եղել է ընթերցողների բավական մեծ աուդիտորիա: Պետք է հիշել, որ բոլոր գրքերի մեջ էլ հեղինակը դիմում է ընթերցողներին, հորդորում է, խրատում, զրուցում: Այդպիսով՝ Ամիրտովաթի գրքերն այն նշանակությունն ունին, որ թեպետև հնչրաժեշտ ուշադրությամբ մոտենալ 15-րդ դարի արևելյան քաղաքների հայ քաղաքացիներին կուլտուրայի ուսումնասիրությանը: Մալխասյանը ասում է, որ «արդեն չորս-հինգ դար ի վեր մինչև Ամիրտովաթը՝ աշխարհաբարը դարձել էր գրական լեզու՝ բժշկական գրվածքների, առականների, վեպերի, աշխարհիկ ոգով բանաստեղծությունների համար, և Ամիրտովաթը հետևեց այդ ընդունված կարգին... «Այդ ամենը ճիշտ է խհարկե: Սակայն Ամիրտովաթի գրքերի լեզուն ոչ միայն աշխարհաբար է, այլև գիտական լեզու, նոր տերմիններով հարուստ մի լեզու, բժշկական, և ոչ միայն բժշկական, այլ նաև բնագիտական ուրույն մի լեզու՝ կերտված հարևան ժողովուրդների կուլտուրայի ազդեցության ներքո: Բանաստեղծությունները և առականների ընթերցողների աուդիտորիան շատ ավելի սովոր էր, այնինչ գիտական գրքերը կարող էին կարգալ միայն ավելի պատրաստված մարդիկ: Դարերի ընթացքում հայերեն կամ օտար բառերի միջոցով ստեղծվել է գիտական ապարատ: Ալքիմիական և բժշկական հայ ձեռագրերի մեջ կան բառեր և դարձվածքներ, որոնք արտահայտում են հին

¹ Տես՝ Ամիրտովաթ Ամասիացի — Օգուտ բժշկութեան, էջ 9, Արմֆանի հրատ., 1940 թ., Երևան:

օրերի հայ գիտունների մտքերը: Եթե այդ լեզուն հասել և անվրեպ դարերի ընթացքում Ամիրտովլաթին և կիրառվել նորից, նշանակում է, որ ծանրագույն պայմաններում էլ արևելյան քաղաքներում կուլտուրական միտքը չի ներհել և հասարակական կյանքը չի մարել: Ավելին կարելի է ասել: Սուլթան Մեհեմեդի պալատական բժիշկը իր հայրենակիցների համար գրեթե իր գրքերը, հենց զբանց շրջանում էլ գտնում է ընթերցողների որոշ կոնտինգենտ և հանդես է դալիս հայ կուլտուրայի գործչի դերում: Ահա ինչու հին հայ բժշկարանների, ալքիմիական ձեռագրերի, նման ուրիշ տակավին անհայտ ձեռագրերի ուսումնասիրութիւնը թելադրում է հրաժարվել արագիցիայի ամբողջութիւն ստացած մի շարք դրույթներից և աշխարհիկ հայ հին բանաստեղծութեան ուսումնասիրութիւնն էլ շաղկապել գիտական ընդլայն կրող հին ձեռագրերի ուսումնասիրութեան հետ: Ամիրտովլաթի գրքի մասին վերջնական խոսքը կարող են ասել մեր բժշկագետները: «Ամիրտովլաթի գրվածքները խմբագրելու համար,—նկատում է Մալխասյանը,—բացի ուրիշ պատրաստութիւնից՝ պետք է նաև միաժամանակ լինել և արաբագետ և բժիշկ, մանավանդ ղեղաբան (ֆարմակոլոգ): Ես զուրկ եմ այս գիտութիւններից: Բացի սրանից՝ պետք էր աշխատանքի ընթացքում միշտ ձեռքի տակ ունենալ բոլոր ձեռագրերը՝ ամեն մի կասկածելի ընթերցվածք սրանց մեջ ստուգելու համար.—սրանից էլ զուրկ էի ես...»: Ձեռյառ այդ ամենին, Ամիրտովլաթի գրքի հրատարակութիւնը կդյուրացնի, անշուշտ, հայ կուլտուրայի կարևոր էջերի ուսումնասիրութիւնը: Հին հայկական բժշկարանների և միաժամանակ բժշկագետների գիտական ուսումնասիրութեանը պիտի զարկ տան առաջին հերթին մասնագետները—մեր բժշկագետները: Բայց մասնագիտական այդ աշխատանքին կարող են և պետք է օժանդակեն թե՛ լեզվագետները և թե՛ պատմաբանները: Արևելյան հայաբնակ քաղաքներում առանձին գրողներ հաճախ հանդես են եկել նաև գիտական ուրույն պրպտումներով: Գրողների-բանաստեղծների, պատմիչների, քարոզիչների կողքին աշխատող հին գիտունները քաղաքային կուլտուրայի ներկայացուցիչներն են եղել: Պարզ է, որ Ամիրտովլաթի նման գործիչների կյանքի ու աշխատանքի գիտական ուսումնասիրութիւնը կարող է լուսաբանել նաև հայ գրականութեան պատմութեան որոշ էջերը:

ԱՐՏ. ԿԱՐԻՆՅԱՆ